



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

« 20 » հուլիսի 2018 թ.

N 156-Ա

**ԿԱՌԼԵՆ ԱՐՇԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 430 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 70-րդ կետի դրույթներով կարգադրում եմ՝

1. 2018 թվականի հուլիսի 20-ից լուծել Կառլեն Արշիկի Հովհաննիսյանի հետ 2016 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 430 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ք. Գավառ